Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

Հ. Խ. Ս. Հ.

ՆԵՐՔ. ԳՈՐԾ. ԺՈՂ. ԿՈՄ.

ԿԱԼԱՆԱՎԱՅՐԵՐԻ ԲԱԺԻՆ

ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

ՀՐԱՀԱՆԳ

ԿԱԼԱՆԱՎԱՅՐԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ-ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ն. Գ. Ժ. Կ. ԿԱԼԱՆԱՎԱՅՐԵՐԻ ԲԱԺՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ—1925 թ.

343.83
Հ-99

343.
Z-99

Գուարեպփոր 279 ը. Տիրաժ 300. Պատվեր № 1
Տպագրական Տրեստի 2-րդ տպարան

2802-10

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

№ 7002

ԲՈԼՈՐ ՈՒՂՂԻՉ ՅԵՎ ԿԱԼԱՆՔԻ ՏՆԵՐԻ ՊԵՏԵՐԻՆ.—

«14» դեկտեմբերի 1925 թ.

Այսու ուղարկվում է ի ղեկավարություն Աշխժողկոմատի յեվ Հ. Ա. Մ. Խ-ի հետ համաձայնեցրած՝ կալանավայրերի Վարչական — Շարքային (адм. строевой) աշխատավորների ծառայության մասին հրահանգը։

Հ ի մ ք —. Աշխժողկոմատի № 3418—30/11 յեվ Հ.Ա.Մ.Խ-ի № 901/1—1401—1/12—1925 թ. գրությունները։

Ներքգործժողկոմ՝ Դուրգարյան

Կալ. անավայրերի բաժնի վարիչ՝ Դավթյան

Института Востоковедения Академии Наук СССР

37.112
14 JUN 2013
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՀ-Арм ССР
56379-66

ԳԼՈՒԽ 1-ԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

§ 1. Իրենց աշխատանքի պետական նշանակությունն ու պատասխանատվությունը, իսկ հաճախ նաև վտանգավորությունը գիտակցելով, կալանավայրի ծառայողները չպետքե թույլ տան իրենց անձնական շահերի վնասակար ազդեցությունն իրենց պաշտոնական գործողությունների ընթացքի վրա և վոչ մի շեղում ծառայության այն կարգից, վորը ներկա հրահանգով, ինչպես և նրա զարգացման համար հրատարակված կանոնադրություններով և սահմանված:

2. Կալանավայրի ծառայողներն, իրենց ծառայության պարտականությունները կատարելիս պարտավոր են՝

ա). Կալանավորների վերաբերմամբ ուղղիչ-աշխատանքային ներգործման միջոցների կիրառմանն ամեն կերպ աջակցել:

բ). Կալանավորների փախուստներն ու նրանց վրա նշանակված թերի հսկողությանը հակազդել.

գ). Կալանավորների հետ վոչ մի գործարքների կամ անձնական, վոչ ծառայական հարաբերությունների (նվերներ ընդունել, հանձնարարություններ կատարել, սպասարկություններից օգտվել և այլն) մեջ չը մտնել.

դ). Կալանավորների հետ վերաբերմունքի մեջ հանգստություն, զգուշություն և անաչառություն պահպանել, հայհոյանքի ու վիրավորանքի արտահայտություններ չգործածել ու նրանց ծեծել կամ վորևե տանջանքներ չպատճառել:

յե). Պահանջի մեջ անհրաժեշտ հաստատակամություն ցույց տալ, վորպեսզի կալանավորները պահպանեն իրենց համար սահմանած կանոններն ու կատարեն ուղղած հրամանները, ինչպես և թույլ չտալ սանձարկություն ու տված հրամանների չկատարում:

ԳԼՈՒԽ 2-ՐԴ

ՎԱՐՉԱԿԱՆ—ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 3. Վարչական-շարքային կազմի բոլոր ծառայողները, ծառայությամբ իրենցից վերադաս և ստորադաս անձանց հետ հարաբերությունների մեջ պարտավոր են խիստ քաղաքավարի և ղղուշ վերաբերմունք ու զինվորական կարգապահություն պահպանել։

§ 4. Զինվորական կարգապահությունը պարտավորեցնում է՝ ա) Որենքի բոլոր պահանջները խիստ կերպով պահպանել. բ). Պետի պահանջները ճշտությամբ կատարել. գ). Ծառայության պարտականությունները բարեխղճաբար ու գիտակցորեն կատարել. դ). Ստորադրյալների պարտազանցություններն առանց ազդեցության չը թողնել։

§ 5. Վարչական-շարքային կազմի այն ծառայողը, վոր որենքի, հրամանի կամ կարգադրության համաձայն մշտապես կամ ժամանակավորապես մյուս աշխատակիցների գործունեությունն է ղեկավարում, է՝ նրանց Պետը, իսկ նրանք՝ ստորադրյալները։

§ 6. Պետը՝ ինչպես իր վարքով, այնպես ել պաշտոնավարության մեջ ստորադրյալների համար որինակ պիտի ծառայի և խելացիորեն պահանջկոտ ու հաստատակամ, բայց միևնույն ժամանակ՝ ճշմարիտ, մաքրելի, հավասար, հանգիստ, ու վերաբերմունքի մեջ քաղաքավարի լինի. նա պարտավոր է ստորադրյալներից ամեն մեկին ճանաչել, նրանց կարիքների բավարարմանն աջակցել և քաղաքացիական ու պաշտոնական իրավունքները խիստ կերպով պաշտպանել։

Ծառայությունը ճիշտ տանելու և ստորադրյալների պատշաճ պատրաստության պատասխանատվությունը նա յե կրում։

§ 7. Պետը ծառայողներին միայն պաշտոնական բնույթ կրող հրամաններ կարող է տալ։ Պետի հրամանը ճիշտ. պարզ և ըստ հնարավորության, համառոտ պիտի լինի։ Հրաման արձակելիս նա ստորադրյալի հարձ ու փորձի միջոցով պիտի համոզվի նրանում, վոր վերջինը հրամանի եյությունը յուրացրել է։

§ 8. Պետը պարտավոր է ստորադրյալներից պահանջել

տրված հրամանի ճիշտ կատարումը և բոլոր որինական միջոցներով հարկադրել կատարելու այն։

§ 9. Հարվածային հանգամանքներում (խլրտում, մասսայական փախուստ, կալանավայրի վրա հարձակում) հրամանը չկատարելու դեպքում, Պետը, հարկադրման բոլոր անհրաժեշտ միջոցներն սպառելուց հետո, պարտավոր է՝ թեկուզ հենց զենքի գործադրությամբ, ստորադրյալին ստիպել կատարելու իր հրամանը։

Նշած բացառիկ միջոցների հետևանքների համար Պետն այն դեպքում է պատասխանատվության յենթակա, յերբ այն վոչ իրական ու բացառիկ անհրաժեշտության սահմաններում է գործադրված յեղել։

§ 10. Ստորադրյալը պետի որինական հրամանները պարտավոր է անհապաղ ու ճշտությամբ կատարել։

§ 11. Յեթե այն ստորադրյալին, վորն իր պետերից մեկից արդեն հրաման ստացել է, իսկ մի ուրիշ, նույն իսկ ստորադաս պետ, նոր հրաման է տալիս, այն դեպքում ստորադրյալը պարտավոր է ստացած նախորդ հրամանի մասին զեկուցել վերջինին և վարվել այնպես, ինչպես նրան այս վերջին հրաման տվող անձը կը հրամայի։

Այն պետը, վորը մյուս պետի հրամանը բեկանել կամ փոխել է, դրա համար ամբողջ պատասխանատվությունն իր վրա է վերցնում և այդ մասին անհապաղ զեկուցում է վերջինին։

§ 12. Ստորադրյալը՝ Պետից բացահայտ հանցապարտ հրաման ստանալիս, առանց կատարելու այն, պարտավոր է յենթակայական կարգով այդ մասին անհապաղ զեկուցել բաձր Պետին, իսկ յերբ այդ անել անկարելի յե—դատախազության հսկողության մարմնին, կամ Արտակարգ Հանձնաժողովի մարմիններին, իսկ նրանց բացակայության դեպքում՝ հայտնել մոտակա Գործկոմի նախագահին կամ պրիզիդիումի անդամներից մեկին։

Յեթե նա ստացած հրամանը համարում է թեև վոչ հանցապարտ, բայց համհնայն դեպս Որենքի հետ չհամաձայնեցրած, այդ մասին զեկուցում է հրաման տվող պետին, և յեթե տվյալ հրամանը վերջինի կողմից նորից կհաստատվի,—կատարում է այն։

Ծանոթություն.— Բացի հանցապարտ հրամանի կատարման դեպքից, յերբ հրաման տվողի հետ և կատարողն է պատասխանատու—Կալանավայրի ծառայողի կողմից Պետի տված պաշտոնական հրամանը ճշտությամբ կատարելու դեպքում, այս վերջինն իր տված հրամանի հետևանքների համար ինքը մենակ է պատասխանատու։

§ 13. Յուրաքանչյուր Պետ պարտավոր է իր վրա դրած գործը բարեխղճաբար ուսումնասիրել ու նրա մեջ խելացի նախաձեռնություն (անձնական նախաձեռնություն) հայտնաբերել։

Նախաձեռնությունը պետք է հայտնաբերվի՝ ա). Այն դեպքերում, յերբ վորևե պատճառներով վոչ մի կարգադրություն չի ստացված, իսկ միևնույն ժամանակ հանգամանքներն անհետաձգելի գործունեություն են պահանջում. բ). Այն դեպքերում, յերբ հրաման տալու մոմենտի ու նրա կատարման ժամանակի միջև հանգամանքը միանգամայն փոխվել է և յուր ժամանակին նոր հրաման ստանալու հնարավորություն չկա։

§ 14. Կալանավայրերի բոլոր ծառայողներն իրենց պաշտոնավարության մեջ պարտավոր են, ըստ հնարավորության, միմիանց աջակցություն ցույց տալ ու հարվածային հանգամանքում նրան վտանգից փրկել, թեկուզ հենց այդպիսին կյանքը վտանգի յենթարկելու հետ կապված լինի։

§ 15. Վարչական-շարքային կազմի անձինք հարկ յեղած պաշտոնական կարիքների համար միշտ իրենց ամենամոտիկ Պետին են դիմում, իսկ վերջինի թույլտվությամբ՝ հրամանատարության հետևյալ պետին և ուղղակի բարձրին կարող են դիմել։

§ 16. Պետը պաշտոնավարության ժամանակ շարքի մեջ չգտնվող ստորադրյալին դիմելիս, յեթե գլխազարդ ունի հագած, միշտ ձեռքն այդ զարդին է դնում ու իսկույն իջեցնում, վորին ստորադրյալը նույնպես ձեռքը գլխազարդին դնելով ու իջեցնելով է պատասխանում։

Նույնպիսի կանոններ ել պահպանվում են այն դեպքում, յերբ պաշտոնավարության ժամանակ ստորադրյալը Պետին է դիմում։

§ 17. Պաշտոնավարության ժամանակ պետերն ստորադրյալին դիմելիս և հակառակը՝ վարչական-շարքային կազմի ծառայողները միմիանց ըստ պաշտոնի յեն կանչում, ավելացնելով «ընկեր» խոսքը։

§ 18. Պաշտոնավարության ժամանակ վարչական-շարքային կազմի ծառայողները սահմանված ձևի տարազով պիտի հագնված լինեն։

§ 19. Վարչական-շարքային կազմի անձինք պարտավոր են սահմանված պահակատեղերում իրենց ձեռքը տված զենքը միանգամայն որինակելի դրության մեջ պահել ու պաշտոնավարության ժամանակ իրենց մոտ կատարելապես պատրաստի դրության մեջ ունենալ։

§ 20. Վարչական-շարքային կազմի անձինք, բացի այն դեպքերից, վոր նշված են սույն հրահանգի 9-րդ §-ում, իրավունք ունին զենք գործադրելու՝

ա). Ինչպես իրենց, այնպես ել կալանավորների վրա հարձակումներից պաշտպանվելու նպատակով.

բ). Կալանավորների կողմից բռնի գործողություններին վերջ տալու համար.

գ). Կալանավորի փախուստի դեպքում։

Բոլոր նշած դեպքերում, մյուս բոլոր միջոցների սպառման պատճառով, զենքի գործադրությունը թույլատրվում է այն ժամանակ, յերբ այդ բացառիկ անհրաժեշտություն է հանդիսանում։

Թանորություն.— Կալանավորների հոգեբուժական եքսպերտիզի ինստիտուտներում և անչափահաս իրավազանցների համար աշխատանքի տներում զենքը միայն այս պարագրաֆի «ա» կետում նախատեսված դեպքում կարող է գործադրվել։

21. Վերը հիշված դեպքերում զենքի գործադրությունը թույլատրվում է ինչպես կալանավորների, այնպես ել նրանց աջակցություն ցույց տվող անձանց դեմ։

22. Հարձակումների կամ փախուստների դեպքում հարձակման յենթարկվածները, կամ կալանավորներին հսկողները զենքի յեն դիմում կամ ավազի հրամանով կամ նրա բացակայության դեպքում՝ ինքնուրույն կերպով, իսկ մնացած դեպքերում Կալանավայրի պետի կամ նրան փոխարինող անձի կարգադրությամբ։

23. Զենքը գործադրելուց առաջ պետք է այդ առթիվ, ըստ հնարավորության, յերեք անգամ նախազգուշացում արվի։

24. Զենք գործածելու յուրաքանչյուր դեպքի համար վարչական-շարքային կազմի ծառայողներն անհապաղ հայտնում են ի գիտություն իրենց պետերին։

ԳԼՈՒԽ Յ-ՐԴ

ՎԱՐՉԱԿԱՆ-ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ԱՆՁԱՆՑ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Բարձր հրամանատարական կազմը

§ 25. Բարձր հրամանատարական կազմին պատկանող անձինք հատուկ կանոնադրության հիման վրա, կամ ՆԳԺԿ կալա-

նավայրերի բաժնի տված իրավունքների սահմաններում են գործում։

Բ. Միջին հրամանատարական կազմը

ա) Կալանավայրի Պետը

§ 26. Կալանավորների ճիշտ ընդունելության, պահելու, տեղավորելու, նրանց աշխատանքի ուղարկելու և ազատելու համար պե՛տն է պատասխանատու։ Նա պատասխանատու է կրթական—դաստիարակչական մասի աշխատանքների կանոնավոր հիմնավորման ու Կալանավայրի ընդհանուր սանիտարական գրության համար. նա պատասխանատու է ինչպես Կալանավայրի, այնպես էլ կալանավորների հանձնած բոլոր գույքի ամբողջության, Կալանավայրում գտնված և այնտեղ մտած դրամների՝, նյութերի՝, կահավորման առարկաների, այլև՝ ընդհանրապես կենդանի և մեռյալ ինվենտարի առարկաների ճի՛շտ, նպատակահարմար ու խնայողաբար ոգտագործման համար։

§ 27. Իրեն վստահած Կալանավայրի գործավարության, հաշվավարության ու հաշվետվության և սահմանված տեղեկագրերն (ведомости) ու հաշվետվություններն յուր ժամանակին ըստ պատկանելույն ներկայացնելու համար պետն է պատասխանատու։

§ 28. Պետը Կալանավայրի կառավարչության առանձին մասերի ու տնտեսության ճյուղերի կառավարումն իր աշխատակիցների մեջ է բաժանում. նրանց վրա դրած ֆունկցիաների կատարման վերաբերյալ՝ նրանց պատշաճ ցուցմունքներ և անհրաժեշտ բացատրություններ է տալիս ու հոգ տանում, որպեսզի նրանք իրենց վրա դրած ծառայության պարտականությունները յուրացնեն ու նրանց լավագույն կերպով կատարեն։

§ 29. Իրեն յենթակա աշխատակիցներին ղեկավարելու համար, պետի կողմից արվելիք բոլոր ցուցմունքներն ու պարզաբանությունները, ինչպես և նշանակելո՛ւ, փոխադրելո՛ւ, պաշտոնից արձակելո՛ւ, ծառայողների արձակուրդի՝ ու նրանց վրա կարգապահական տուգանք դնելու մասին, Կալանավայրում հրամանով են հայտարարվում։

§ 30. Պետի ժամանակավորապես բացակայությունների ու կարճաև արձակուրդների դեպքում, նրա ֆունկցիաները նրա ավագ ոգնականն է կատարում, իսկ ուր վերջինը չկա—պետի

այցողությամբ՝ ոգնականներից մեկը. յեթե հատիքով (շտատ) այդպիսիները չեն դրված և Կալանավայրը այդ մասին ՆԳԺԿ Կալանավայրերի բաժնից առանցին կարգադրություն չունի—ավագ վերակացուն։

§ 31. Կալանավայրերն այցելելու ժամանակ՝ 1) ՀՍԽ Հանրապետության սահմաններում—ՀՍԽՀ ԿԳԿ պրիզիդիումի անդամների, ԺԿԽ նախագահի ու նրա ոգնականի, Առողջապահության Ժողովրդական Կոմիսարի, Ներքին Գործոց Ժողովրդական Կոմիսարի, Կալանավայրերի բաժնի պետի կամ նրա ոգնականի կողմից. 2) Յուրաքանչյուր գավառի կամ շրջանի սահմաններում—Գավառական Գործադիր Կոմիտեյի նախագահի, Վարչական բաժնի վարիչի և ՆԳԺԿ Կալանավայրերի բաժնի պետի կողմից—Կալանավայրի գրության մասին նրա պետը զեկուցում է նրանց և առաջնորդում է անհրաժեշտ տեղեկություններ ներկայացնելով, յեթե յեկող անձի կողմից դրանից չի ազատվում։

Թանոտություն.—ՆԳԺԿ Կալանավայրերի բաժնի մեյուս ծառայողները Կալանավայրերն այցելելու դեպքում զեկուցում պահանջելու իրավունքով ոգտվում են, յեթե նրանք Կալանավայրի բաժնի անունից հատուկ մանդատներով են գործում։

§ 32. Ուղղիչ-աշխատանքային որենսգրքի 222 և 223 հոդվածներում հիշված այլ անձանց կողմից Կալանավայրերն այցելելու դեպքում, պետը, ըստ հնարավորության, նրան անձամբ է առաջնորդում, կամ դրա համար իր ոգնականներից մեկին է գործուղում։

§ 33. Կալանավայրի հետ կապ ունեցող և ՆԳԺԿ Կալանավայրերի Բաժնի հատուկ վկայականներով յեկած այլ անձանց կողմից Կալանավայրն այցելելու դեպքում, պետը նրանց պատշաճ աջակցություն է ցույց տալիս։

§ 34. Կալանավայրում պատահած բոլոր դեպքերի մասին պետը սահմանված կարգով անմիջապես հայտնում է ի գիտություն ՆԳԺԿ Կալաոավայրերի Բաժնին ու պատշաճ քննություն է կատարում։

§ 35. Բոլոր այն դեպքերի մասին, որոնք իրենց մեջ հանցապարտության նշաններ են ամփոփում, Կալսնավայրի պետն անհապաղ հայտնում է դատախազության, ընդ որում վարվելով Քրեական-Դատավարության սրենսգրքի յեվ ներկա հրահանգի ժամանակներով։

§ 36. Հանկարծամահության կամ կալանավորի փախուստի դեպքում կալանավայրի պետը, բացի դատախազության հսկողության անձանցից, նույնպես հայտնում է այն դատական կամ քննիչ մարմիններին, որոնց հաշվում կալանավորը գտնվում է։

Բացի դրանից, կալանավորի փախուստի մասին պետն անհապաղ հայտնում է ի գիտություն հետախույզ մարմիններին՝ փախչողներին ձերբակալելու համար միջոցներ ձեռք առնելու։

Դաճորություն.— Կալանավորի մահվան դեպքում պետն անհապաղ հայտնում է կալանավայրի բժշկին, կամ առողջապահության մարմնին։

Պետի ավագ ոգնականը

§ 37. Կալանավայրի կառավարման բոլոր ճյուղերի ընդհանուր հսկողության գործում պետի ոգնականը հանդիսանում է նրա անմիջական աշխատակիցը, իսկ պետի բացակայության ժամանակ—նրա փոխանորդը։ Պետն իր առանձին պարտականությունների կատարումն ոգնականի վրա կարող է դնել, տալով նրան համապատասխան ցուցմունքներ։ Դրա համար էլ ավագ ոգնականը կալանավայրի կյանքի բոլոր կողմերի մասին իրազեկ պիտի լինի։ Պետի կարճատև բացակայության ժամանակ ոգնականը նրան փոխարինելիս, գործում է պետի տված հրահանգների (դիրեկտիվները) սահմաններում։

Նրա վրա դրած պարտականությունների սահմանում նրանց ամբողջի պատասխանատվությունը նա չի կրում։

Դաճորություն. Ցերեք հոգուց ավելի ոգնականներ ունեցող կալանավայրում պետի փոխանորդի իրավունքներով ոգտվող ավագ ոգնականը կալանավայրի հերթապահությունից ազատվում է, բայց, պարտավոր է կալանավայրի պարբերական շրջագայություններն ու ծառայողների կողմից իրենց պարտականությունները կատարելու ստուգումն անել։

§ 38. Ավագ ոգնականը հսկողության կոմանդայի (команда надзора) վարիչն է, ինչպես յեվ կրթսեր ոգնականների հսկողության ու մյուս աշխատակիցների կարգունի (наряд) տանողը ու նրա ճիշտ կատարման վրա հսկողը։

§ 39. Հսկողության հրամանատարի պաշտոնը վարելիս, պետն իրեն վստահած հրամանատարության (команда) վենքը պահելու և լավ պահպանելու համար պատասխանատու յե հանդիսանում և ամիսը մեկ անգամից վոչ պակաս զենքն ստուգում է ու փչացածները նորոգելու համար միջոցներ ձեռք առնում։

§ 40. Ավագ ոգնականն իրեն վստահած հրամանատարության անձանց զենք պահելը սովորեցնելու և այն գործածելու համար պատասխանատու յե հանդիսանում։

Գ. պետի կրտսեր ոգնականները

§ 41. Կալանավայրի տնտեսա-վարչական կառավարչության մեջ կրտսեր ոգնականները պետի պատասխանատու աշխատակիցներն են հանդիսանում ու կալանավայրում պետի կողմից նրանց վրա դրված ուղղակի պարտականություններից բացի, կալանավայրի որ ու գիշերվա (суточный) հերթական հերթապահությունն են տանում։

§ 42. Կալանավորների պարենը յուր ժամանակին ստացվելու և վերջիններին սահմանված պարենով՝ կերակրով, տաք ջրով (кипяток), հագուստով, սպիտակեղենով, վոտնամաններով, մահիճով, ամանով և այլ ինվենտարով բավարարելու, ինչպես և կալանավայրի շենքի ու բակի պատշաճ դրության, տաքացնելու և լուսավորելու, կալանավորների կողմից պատվիրած, և իրրև հանձնողի իրենց կողմից ստացված առարկաների ճիշտ բաժանման համար, կրտսեր ոգնականը—տնտեսության վարիչն և պատասխանատու։

§ 43. Զինարանների (цейхгауз) և մառանների, խոհանոցի, հացագործարանի, բաղանիքի, լվացքանոցի, հրդեհաշեջ գործիքների, տնտեսության գումակի կանոնավոր պահպանման, ինչպես և ընչական մթերումն յուր ժամանակին նորոգելու, մաքրելու և լվանալու վրա նա չի հսկում։

§ 44. Կորպուսի մեջ վարչական կարգի և վերակացուների կողմից կալանավորներին պահնորդելու պարտականությունները ճիշտ կատարելու և պատշաճ մաքրություն ու կարգապահություն պահպանելու համար, կրտսեր ոգնականը—կորպուսի վարիչն և պատասխանատու։ Իր ստորադրյալների բոլոր պաշտոնական թերացումների մասին նա, հսկողության հրամանատարության վարիչի միջոցով, հայտնում է Կալանավայրի պետին։

§ 45. Նա պարտավոր է բոլոր կամերներն ամեն որ շրջել, կալանավորների հետ ծանոթանալ, նրանց կյանքի մեջ թափան-

ցել, հայտարարություններ ու գանգատներ ընդունել և նրանցից այնպիսիները, որոնք իրեն իրավունքների ու պարտականությունների սահմաններից դուրս չեն գալիս՝ ինքնուրույն կերպով լուծել. մնացած բոլոր հայտարարությունների ու գանգատների մասին նա հայտնում է ի գիտություն պետին և հետևում է նրանց, որպեսզի նրանք ըստ պատկանելույն ուղարկվեն։

§ 46. Կալանավորներին յուր ժամանակին մթերքներով, մահճով ու անտեսական ինվենտարով բավարարելու, ինչպես և յուր ժամանակին զրոսանք ու բաղանիք տրամադրելու վրա, նա յե հսկում. նա ներկա յե լինում կալանավորների այցին ու ստացումների ընդունելության և հսկում է, որպեսզի պատվիրած կալանավորների ստացված մթերքները ճիշտ կերպով բաժանվեն նրանց միջև։

§ 47. Նա հսկում է, որպեսզի այն կամերները, որոնք փակ պիտի պահվեն, փակ լինեն. կալանավորներին ու կամերները պարբերաբար ու հանկարծակի խուզարկում է և կամերներում գործածության ու պահելու համար արգելված իրերն ու առարկաները վերցնում է, որի մասին արձանագրություն և կազմում և ներկայացնում Կալանավայրի պետին ի կարգադրություն։

§ 48. Նա կալանավորներին կամերների մեջ գոյություն ունեցող կանոնադրությունների (հոդ. 113 ՈՒ. Ա. Կ) համաձայն է դասավորում։

Դ. Պետի հերթապահ ոգնականը

§ 49. Պետի հերթապահ ոգնականը անմիջականորեն կալանավայրի պետին է յենթարկվում.

Որ ու գիշերվա կարգունի բոլոր անձինք նրան են յենթարկվում։

§ 50. Որ ու գիշերվա կարգունի մարդկանց յուր ժամանակին պահակատեղերում նա յե վերակարգում և հսկում է, որպեսզի նրանք սահմանված տարազով հագնված լինեն, մոտներն ունենալով իրենց համար սահմանված զենքը։

§ 51. Որ ու գիշերվա կարգունի մարդկանցից որևե մեկի հիվանդության դեպքում, նա կարգադրություն է անում նրան անհապաղ փոխելու և կարիք յեղած դեպքում հայտնում է ի գիտություն կալանավայրի պետին։

§ 52. Պահվող կալանավորների ինչպես և աշխատանքի գնացածների, հիվանդների ու բացակայողների թիվը պարտավոր է գիտենալ։

§ 53. Բոլոր նոր յեկողներին հերթապահ ոգնականն է կալանավայր ընդունում, խիստ կերպով պահպանելով յեկվորների հետ համապատասխան փաստաթղթեր լինելու պահանջն ու ղեկավարվելով այդ առթիվ սահմանված կանոններով։

§ 54. Նա հսկում է, որպեսզի կալանավորները դատական և քննիչ մարմիններին, ինչպես և այլ հիմնարկներ յուր ժամանակին ուղարկվեն։

§ 55. Նա հսկում է բոլոր նորեկ կալանավորների խուզարկության վրա և կամերներում գործածության ու պահելու համար արգելված իրերն ու զրամը վերցնում է, որոնք սահմանված կարգով ի պահ է հանձնում։

§ 56. Կալանավայրում սահմանված որակարգի ու կալանավորներին իր ժամանակին աշխատանքի տանելու, ինչպես և աշխատանքը վերջացնելուց հետո արհեստանոցներից հետ բերելու վրա, նա յե հսկում։ Բոլոր շինություններն ու բակը յուր ժամանակին լուսավորելու և յուր ժամանակին լուսավորությունը դադարեցնելու վրա նույնպես նա յե հսկում։

§ 57. Ուղղիչ-Աշխատանքի որենսգրքի 222 և 223 հոդ. հոդ. նշած անձինք կալանավայրեր այցելելիս, պետի ու նրա փոխանորդի բացակայության դեպքում, սույն հրահանգի 31-33 § § հիշված պարտականությունները կատարելու նկատմամբ, պետին նա յե փոխարինում։ Պետի ներկայությամբ վերոհիշյալ անձանց դիմավորելիս, նա իրև հերթապահ է ներկայանում նրանց, զեկուցելով «այսինչ կալանավայրի հերթապահ»։

§ 58. Համաձայն այդ առթիվ սահմանված կանոններին այս կամ այն առարկան կալանավայր տանելու կամ այնտեղից դուրս բերելու, ինչպես և կալանավորներին կալանավայրի պարիսպներից դուրս տանելու գրավոր թույլտվությունները, նա յե տալիս։

§ 59. Պետի ու նրա փոխանորդի բացակայության ժամանակ կալանավայրի պատասխանատու անձը հերթապահ ոգնականն է հանդիսանում։

§ 60. Հերթապահը կալանավորների առավոտյան և իրիկնային ստուգումները կատարում է մեկ անգամից վոչ պակաս ցերեկը և 2 անգամ՝ գիշերը. շրջում է շինություններն ու պահա-

կատեղը և իր կատարած ստուգման ժամանակն ու նկատած թերությունները գրում է պահակային գրքույկի մեջ։

§ 61. Հերթապահ ոգնականը կալանավայրում հում է առանց բացակայության ու հերթապահի սենյակումն և տեղավորվում. հերթապահական գործերով այնտեղից գնալիս, ուր գնալու մասին տեղեկություն է թողնում։

§ 62. Հանկարծակի հիվանդության, կամ այն դեպքում, յերբ հերթապահությունն տանելն այլև անհնարին է, հերթապահ ոգնականը պարտավոր է այդ մասին անհապաղ զեկուցել պետին կամ նրա փոխանորդին՝ նոր հերթապահ նշանակելու համար և վերջինին իր հերթապահությունն հանձնելուց հետո յե միայն թողնում իր պահակատեղին։

§ 63. Հերթապահության ժամանակի բոլոր պատահարներն ու դեպքերը հերթապահի գրքի մեջ և գրում և հերթապահությունը փոխելուց հետո, նրանց մասին զեկուցում է պետին։

§ 64. Կալանավայրի կյանքի սովորական հանմանններից դուրս յելնող բոլոր դեպքերի մասին նա անհապաղ հայտնում է ի գիտություն պետին, կամ նրա փոխանորդին։

§ 65. Կալանավորների խլրտումների, մասսայական փախուստի, հրդեհի և, իրենց կարևորությամբ բացառիկ, պատահարների դեպքում, մինչև պետի կամ նրա ոգնականի տեղը ժամանելը, հերթապահ ոգնականը ձեռք է առնում բոլոր անհրաժեշտ միջոցները։

ՁԵ. Պետի ոգնականը—կալանավայրի բանվորական մասի վարիչը

§ 66. Բանվորական մասի վարիչը կալանավորների աշխատանքի կազմակերպման գործում պետի ամենամոտիկ ոգնականն ու կալանավայրի բոլոր աշխատանքների անմիջական զեկավարն է։

Ծանոթություն.—Բանվորական մասի վարիչը կալանավայրում որ ու գիշերվա հերթապահություն չի տանում։

§ 67. Բանվորական մասի վարիչը պարտավոր է՝ կալանավայրի աշխատանքների զարգացման և, ըստ հնարավորության, բոլոր կալանավորներին աշխատանքների մեջ քաշելու համար հոգ տանել։

§ 68. Բանվորական մասի վարիչը, ըստ հնարավորության,

56379-66

արհեստանոցների լավ կահավորման մասին է հոգ տանում, աշխատանքների մեջ հրահանգիչների գործունեությունն է զեկավարում և այդ պաշտոնների համար անհրաժեշտ թեկնածուներ է ճարում։

§ 69. Արտադրությունն առավել բացիոնալ կերպով դնելու մասին հոգ տանելով, տեխնիկայի կողմից նա, ըստ հնարավորության, պատրաստվող մթերքի ընտիր վորակին ու ամենաշատ արտադրողականությանը պիտի ձգտի, իսկ արհեստակցական կողմից—կալանավորների արհեստակցական փորձառությանն ու պիտությանը։

§ 70. Այս նպատակներով աշխատանքի բիացիոնալ բաժանելն ու այս կամ այն արհեստը սովորեցնելու համար, կալանավորներին խմբերի ճիշտ բաժանելու և հրահանգիչների բավարար թվի վրա հատուկ ուշադրություն պիտի դանձնել։

§ 71. Բանվորական մասի վարիչը յուրաքանչյուր արտադրության համար առանձին ինվենտարի ցուցակ է պահում և դրա համար պատասխանատու յե։

§ 72. Նա պատվերներ է ճարում, կալկուլյացիաներ և կազմում է պետի հետ միասին պատվերներ ընդունելու հարցը լուծում։

§ 73. Պատվերները մաքուր կատարելու, մեքենաները, դազգահները և գործիքները ճիշտ ոգտագործելու, յուր ժամանակին մաքրելու և նորոգելու, ինչպես և աշխատանքի նյութերը նպատակահարմար ոգտագործելու և պահելու համար, նա յե պատասխանատու։

§ 74. Աշխատանքի ժամանակ կարգի վրա նա յե հսկում և աշխատանքի պաշտպանության համար բոլոր անհրաժեշտ և ոբենքով պահանջվող միջոցները ձեռք առնում։

§ 75. Կրթական դաստիարակչական մասի մատնակցությամբ կալանավորների արհեստակցական-արտադրական վարժությունն է կազմակերպում և իրականացնում։

§ 76. Աշխատանքը յուր ժամանակին ու ճիշտ կերպով գրանցելու և սրանց համար կալանավորների հետ վերջնահաշիվ տեսնելու, ինչպես և հաշվետվությունը ճիշտ տանելու և բալանս կազմելու համար, բանվորական մասի վարիչն է պատասխանելու։

ՊԵՏ ԿՈՄ ԳՐԱԴԱՐԱՆ ՀՍՍ Գրադարան
ՀԱՅԿ-ԱՊՍ ՍՍՌ
Ա. ԻՆ. Ա. ՄԱՍԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿ-ԱՊՍ ՍՍՌ

Ջ. Պետի օգնականը կրթական դաստիարակչական մասի վարիչը

77: Կրթական դաստիարակչական մասի վարիչը կալոնավորների մեջ դպրոցական և արտադպրոցական կուլտ-կրթական աշխատանքներ կազմակերպելու գործում, կալոնավայրի պետին օգնական է հանդիսանում:

Ծանոթություն՝ կրթական դաստիարակչական մասի վարիչը կալոնավայրում որ ու գիշերվա հերթապահություն չի տանում:

§ 78. Կրթական դաստիարակչական մասի վարիչը քաղլուսավորչական աշխատանքի մեջ քաղլուսվարի և մյուս մարմինների հետ, վորոնք կալոնավայրի կուլտ-կրթական գործին աջակցություն կարող են ցույց տալ, համաձայնություն է կայացնում:

§ 79. Կրթական դաստիարակչական մասի համար աշխատավորներ նա յե ընդունում և ներկայացնում կալոնավայրի պետին ի հաստատություն:

§ 80. Կուլտուրկրթական աշխատանքների շենքերի (ակումբի, դպրոցի, գրադարանի, թատրոնի թանգարանի և այլն) պատշած կահավորման և նրանց անհրաժեշտ առարկաներով ու պարագաներով մատակարարելու մասին, նա յե հոգ տանում:

§ 81. Կալոնավորների արհեստակցական արտադրողական վարժությունների կազմակերպման մեջ նա յե մասնակցում:

§. 82. Կալոնավորների համար իրավական օգնությունը նա յե կազմակերպում:

§ 83. Ինչպես դպրոցական, այնպես էլ խմբակային պարապմունքների կարգը նա յե սահմանում, համակերպելով այն կալոնավորների արտադրողական բնույթին ու այլ աշխատանքներին:

§ 84. Կալոնավորներին դպրոցական և արտադպրոցական կուլտկրթական աշխատանքների մեջ նա յե քաշում յեվ հոգ տանում վորպեսզի անգրագետներն ու կիսագրագետները պարտադիր կերպով դպրոց հաճախեն, ինչպես և կալոնավայրում կուլտ կրթական հիմնարկները կանոնավոր գործեն:

§ 85. Կրթական դաստիարակչական մասի բոլոր աշխատակիցների աշխատանքի հաշիվը նա յե ղեկավարում, հրահանգում ու պահում:

§ 86. Կալոնավորների անձնավորության, նրանց հոգեբանության ու վարքի մեջ փոփոխությունների ուսումնասիրությունը նա յե կազմակերպում:

§ 87. Աշխատանքի ծրագիրն ու պատժական—մանկավարժական այլ խնդիրները քննելու համար կրթական դաստիարակչական մասի աշխատակիցների պարբերաբար խորհրդակցությունները նա յե կազմակերպում:

§ 88. Կալոնավորների հետ ավելի պլանաչափ աշխատանք տանելու համար, ուսուցիչների և դաստիարակների միջև կալոնավորներին առանձին խմբերի նա յե բաժանում:

§ 89. Կրթական—դաստիարակչական մասի կենտրոնական և տեղական հիմնարկների կողմից բաց թողած վարկերի, ինչպես և այդ մասին վճարով տրված զվարճալիքներից և այլ յեկամուտներից ստացված մուտքերի բաշխման մեջ կալոնավայրի պետի հետ նա յե մասնակցում:

§ 90. Կրթական դաստիարակչական մասի վարիչը վերադիտող հանձնաժողովի մեջ մասնակցելիս, առանձին կալոնավորներին վերաբերող հարցերի քննության ժամանակ պիտի ներկայացնի նրանց բնորոշող բոլոր նյութերը:

Ե. Հսկողությունը

§ 91. Ինչպես ազատազրկվածներին կալանքի տակ պահելու, այնպես էլ նրանց վրա ուղղիչ—աշխատանքային ներգործության նկատմամբ, նրանց անմիջական ու ամենամոտիկ հրակիչը վերակացուն է:

§ 92. Վերակացուները ծառայությունը կատարում են համաձայն կարգոնի:

§ 93. Խոշոր կալոնավայրերում հերթապահ օգնականներին օգնելու համար, ավագ և բաժանմունքի վերակացուները պետի հայեցողությամբ աշխատանքի մեջ են քաշում ու փոխադրիչների (разводящий) պարտականություններ տանում:

Զ. Ավագ վերակացուները

§ 94. Ավագ վերակացուներն իրենց պաշտոնական պարտականությունների մեջ ստորաբաժանվում են՝ խմբի, տնտեսության, աշխատանքների և կորպուսների ավագների (ստարշինա):

§ 95. Այն կալանավայրերում, ուր հաստիքով ոգնականի պաշտոն սահմանված չի, պետի կարճատև բացակայության դեպքում, նրան ավագ վերակացուն է փոխարինում։

§ 96. Կալանավայրերում, ուր պետի մի ոգնական կա, ավագ վերակացուն ոգնականի հետ հերթով կալանավայրի հերթապահություն է տանում։

§ 97. Խմբի ավագ վերակացուն (ստարշինա) պետի ոգնական՝ խմբի վարիչի ամենամոտիկ աշխատակիցն ու ամբողջ հսկողության անմիջական պետն է հանդիսանում։

§ 98. Պահակային կարգունի համաձայն յուր ժամանակին ծառայության գնալու համար, վերակացուների վրա նա յե հսկում։

§ 99. Վերակացուներին իրենց պարտականությունների մեջ նա յե հրահանգում և նրանց կողմից ծառայություն գիտենալն ու նրա տանելու ճշտությունը նա յե ստուգում։

§ 100. Իր ստորադրյալներից հիվանդացողների, նրանց կարիքների ու դիմումների ինչպես և կատարած պարտազանցությունների մասին, պետի ոգնական՝ խմբի վարիչին նա յե զեկուցում։

§ 101. Ձենքի կանոնավոր վիճակի վրա նա յե հսկում։

§ 102. Տնտեսության ավագ վերակացուն իրրև պետի ոգնական, տնտեսական բաժնի վարիչի ամենամոտիկ աշխատակիցն ու կալանավայրի տնտեսական ասպարիզում պարապող բոլոր վերակացուների ու բանվորների վրա անմիջական պետ է հանդիսանում։

§ 103. Տնտեսության ավագ վերակացուն հսկում է՝ ա). Կալանավայր մտնող տնտեսական բոլոր մթերքների, առարկաների ու նյութերի ընդունելության, բ). կալանավորներին յուր ժամանակին կերակուր և տաք ջուր մատակարարելու, գ). յուր ժամանակին սպիտակեղենը նորոգելու, պահելու և լվանալու, ինչպես և իր ժամանակին սպիտակեղեն տալու, դ). կալանավորների հագուստեղենի ու վոտնամանների կանոնավոր պահպանման, յե). նրանց համար յուր ժամանակին բաղնիք պատրաստելու վրա։

§ 104 Բոլոր բակերի ու տնտեսական շինությունների, որինակ խոհանոցի, հացագործարանի, լվացքանոցի, բաղնիքի, գոմի, մառանի պաշտպանության համար և այլն, նա յե պատասխանատու։

§ 105. Ձենքերի, մառանների, ազդանշանների (սիգնալիզացիաների) ու հրդեհաշեջ հարմարությունների կանոնավոր վիճակի, ինչպես և բոլոր շինությունները յուր ժամանակին տաքացնելու և սահմանված նորմայով վառելանյութեր մատակարարելու վրա, նա յե հսկում։

§ 106. Ձիերի աշխատանքի հաշիվը նա յե պահում և տնտեսական գումակի կանոնավոր գրության ու ձիերի պատշաճ խնամքի վրա նա յե հսկում։

§ 107. Բոլոր հայտնաբերած բացերի մասին նա հայտնում է ի գիտություն պետի ոգնական—տնտեսության վարիչին։

§ 108. Աշխատանքների ավագ վերակացուն պետի ոգնական—աշխատանքի մասի վարիչի ամենամոտիկ աշխատակիցն ու աշխատանքների մեջ պաշտոնավարող բոլոր վերակացուների անմիջական պետն է հանդիսանում։

§ 109. Կալանավորներին յուր ժամանակին աշխատանքի տանելու և աշխատանքից հետ բերելու, այլ և խուզարկություններ կատարելու վրա նա յե հսկում։

§ 110. Նա պարտավոր է կալանավայրի տերիտորիայի վրա գտնվող արհեստանոցներն ու զրսի աշխատանքի տեղերը շրջել և հսկել, վորպեսզի կալանավորները ժամանակը պարապ չանցկացնեն։

§ 111. Բոլոր աշխատանքները վերջացնելուց ու կալանավորներին զուրս տանելուց հետո, աշխատանքների ավագ վերակացուն ստուգում է վանդակների ամբողջությունը և, վորպեսզի համոզվի, թե զուրս են գնացել արդյոք բոլոր կալանավորներն ու ծառայողները, գնում է բոլոր այն շինությունները, ուր աշխատանքներ են կատարվել, կրակները հանգցնում է, շինությունները կողպում է ու բալանները հանձնում հերթապահ ոգնականին։

§ 112. Կորպուսի ավագ վերակացուն պետի ոգնական՝ կորպուսի վարիչի ամենամոտիկ աշխատակիցն ու տվյալ կորպուսում պաշտոնավարող բոլոր վերակացուների և ծառայողների անմիջական պետն է հանդիսանում։

Վերջիններիի բոլոր պաշտոնական պարտականությունների մասին նա զեկուցում է կորպուսի վարիչին։

§ 113. Նա հսկում է վորպեսզի կալանավորներն որվա սահմանած բաշխումը ճիշտ պահպանեն, հսկում է կորպուսի կարգի ու մաքրության վրա, ինչպես և նրա վրա, վորպեսզի

տարաբերություններ չթույլատրվեն այն կալանավորների միջև, որոնց այդպիսիներն արգելված են, և որպեսզի այն կամերաները փակ լինեն, որոնց համար այդ սահմանված է։

§ 114. Կալանավորների գրած նամակներն ու դիմումները կորպուսի վարիչին հանձնելու համար, նա յև ընդունում։

§ 115. Նա հսկում է՝ ա) զբոսանքի ցուցակի (расписание) ճիշտ պահպանման, կալանավորներին աշխատանքների դուրս տանելու և այլն. բ) կորպուսի բոլոր վերակացուների կողմից ծառայությունը ճիշտ կատարելու, գ) վանդակների և փակերի կանոնավոր պահպանման վրա։

§ 116. Նա մասնակցում է ինչպես կամերները, այնպես էլ կալանավորներին խուզարկելու մեջ։

§ 117. Կորպուսի կալանավորների պերսոնալ հաշիվը—ցույց տալով այն կամերը, որի մեջ յուրաքանչյուր կալանավոր պահվում է,—ինչպես և դպրոց, հիվանդանոց և այլ աշխատանքների տարվելու յենթակաների ցուցակը նա յե պահում։

§ 118. Կալանավայրում կարգը խանգարելու, ինչպես և առանձին պատահարների դեպքում, կորպուսի ավագ վերակացուն խանգարված կարգը վերականգնելու համար պարտավոր է առանց հետաձգելու, բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռք առնել՝ պատահածի մասին անհապաղ զեկուցելով կորպուսի վարիչին, իսկ նրա բացակայության դեպքում՝ հերթապահ ոգնականին։

§ 119. Այն կալանավորների վարքի վրա, որոնք կարգապահական տույժի յեն յենթարկված, կամ հայտարարել, կորպուսի ավագ վերակացուն հատուկ աչալուրջությամբ և հսկում։

§ 120. Կալանավայրի պետի, նրա փոխանորդի, կորպուսի վարիչի և ոգնականի, ինչպես և սույն հրահանգի 31 և 32 § §-ում հիշված անձանց կողմից կորպուսն այցելելիս. կորպուսի ավագ վերակացուն զեկուցում է յուր հսկողության տակ պահվող կալանավորների թվի մասին ու յեկող անձին յուր կորպուսում առաջնորդում է, յեթե վերջինի կողմից դրանից չի ազատվում։

§ 121. Կորպուսի ավագ վերակացուն հսկում է, որպեսզի կամերներում պահվող կալանավորները բոլոր ընչական մթերքներով ու անհրաժեշտ անտեսական ինվենտարով բավարարված լինեն և որպիսզի այդպիսիք կալանավորների կողմից մաքուր պահվեն ու պահպանվեն։

Ռ) Բաժանմունքի Վերակացուն

§ 122. Բաժանմունքի վերակացուն հսկում՝ է իրեն յենթակա պահակ վերակացուների կողմից իրենց պաշտոնական պարտականությունները կատարելու և կալանավորների կողմից՝ որվա սահմանված կարգը պահպանելու վրա, ինչպես և նրա վրա, որ այն կամերները, որոնք փակ պետք է լինեն. փակած պահվեն։

§ 123. Ընչական մթերքների, մահճի և անտեսական ինվենտարի պահպանման, արգելված առարկաներ և ավելորդ իրեր կամերներում պահելու, ինչպես և կամերները պատշաճ մաքրության մեջ պահպանելու համար, կալանավորների վրա նա յե հսկում։

§ 124. Բաժանմունքների միջև կերակուրը ճիշտ բաժանելու, ինչպես և կալանավորներին յուր ժամանակին տաք ջուր ժամակարարելու վրա նա յե անմիջականորեն հսկում։

§ 125. Կալանավորներին զբոսանքի, գրասենյակ, դպրոց տանելու վրա և այլն, նա յե հսկում, և հարաբերություններ թույլ չի տալիս այն կալանավորների միջև, որոնց այդ արգելված է։

§ 126. Նա մասնակցում է այն խուզարկությունների մեջ, որոնք կորպուսի վարչի կամ ավագ վերակացուի կարգադրությամբ են կատարվում։

§ 127. Նա հսկում է, որպեսզի կալանավորները կամերներն ոգափոխեն ու սահմանված որերերում մահճի փոշին թափ տան։

§ 128. Բաժանմունքների կալանավորների յերեկոյան նախնական ստուգումը նա յե կատարում ու նրա հետևանքների մասին կորպուսի ավագ վերակացուին հայտնում։

§ 229. Կարգի խանգարմանը վերաբերող իր արած բոլոր նկատողությունների մասին բաժանմունքի վերակացուն զեկուցում է կորպուսի ավագ վերակացուին.

§ 130. Կալանավայրի պետի, նրա փոխանորդի, պետի ոգնականի, կորպուսի վարիչի ու հերթապահ ոգնականի, ինչպես և սույն հրահանգի 31 և 32 § §-ում հիշվածների կողմից բաժանմունքն այցելելիս, բաժանմունքի վերակացուն զեկուցում է բաժանմունքում պահվողների թվի մասին ու յեկող անձին իր բաժանմունքի սահմաններում առաջնորդում է, յեթե նրա կողմից դրանից չի ազատվում։

Գ) Կրթական վերակացուները

§ 131. Ներսի ու դրսի պահակատեղերում, աշխատանքների տեղում— ինչպես դրսի, այնպես էլ արհեստանոցներում ու դպրոցական և արտադպրոցական աշխատանքներում, կալանավորների վերահսկողության ծառայությունը կրթական վերակացուներն են տանում, ըստ որում նրանք ոչ միայն կալանավորների փախուստ կամ որևէ անկարգություններ չպիտի թույլ տան, այլ և այդ ուղղությամբ ամեն տեսակի փորձերը ընում պետք է խեղդեն։

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՍԻ ՊԱՇԱԿԱՏԵՂԵՐՈՒՄ

(§ § 132—139)

§ 132. Ներսի պահակատեղի անցնելիս, վերակացուն փոխվող պահակից կալանավորներին համարքով և ընդունում, ցույց տալով բացակայողների թիվը, որից հետո նրանից բանալիներն և ընդունում։ Փոխված վերակացուն կորպուսից անհապաղ հեռանում է։ Վարևե թյուրիմացության դեպքում, փոխվող վերակացուն բանալիները չի ընդունում և մինչև փոխադրի կարգադրությունը, յերկու վերակացուն էլ մնում են պահակատեղում։

133. Պահակ վերակացուն բանալիները պարտավոր է շարունակ իր մոտ պահել, ըստ որում բանալիները որևէ տեղ դնելը կամ կողպեքի մեջ թողնելը խստիվ արգելվում է։

134. Պահակ վերակացուն պարտավոր է շարունակ փակած պահել այն կամերաներն ու միջանցքից մտնող դռները, որոնք փակ պիտի լինին. բանալով այդպիսիները միայն բաժանմունքի վերակացուի ներկայությամբ և թույլ չտալով առանձին կամերաների կալանավորների միմիանց հետ հարաբերություն, յեթե այդ նրանց արգելված է։

§ 135. Աշխատանքի, զբոսանքի, դպրոց, գրասենյակ տանելիս և այլն, հերթապահ վերակացուն, կալանավորներին տանելու յեկած բաժանմունքի վերակացուի ներկայությամբ, կալանավորներին համարքով և հանձնում ու նույնպես համարքով ընդունում։

§ 136. Պետական գույքի և ինվենտարի ամբողջության ու պահպանման, միջանցքի, արտակնոցի, կամերի և իր հսկողության տակ գտնվող շինությունների պատշաճ վարքության վրա նա յե հսկում։

§ 137. Իր հսկողության տակ գտնվող յուրաքանչյուր կամերում պահվողների ճիշտ հաշիվը նա յե պահում։ Կալանավորներին աշխատանքի, զբոսանքի, դպրոց տանելիս և այլն, նրանց համարքով է հանձնում և ընդունում։

§ 138. Կալանավորների վարքի ու կալանավայրում սահմանված կարգը նրանց կողմից պահպանելու վրա նա յե հսկում ու նկատած խախտումների մասին զեկուցում է բաժանմունքի կամ կորպուսի վերակացուին։

§ 139. Պահակ վերակացուն միշտ աչալուրջ պիտի լինի։ Պահակատեղում քնելը, որևէ պատրվակով բացակայելը, ինչպես և որևէ կողմնակի զբաղմունքներով ու զբույցներով պարապելը, նրան խստիվ արգելվում է։

ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐԻ ՊԱՇԱԿ ՎԵՐԱԿԱՑՈՒՆ

(§ § 140— 146)

§ 140. Այն վերակացուն, որն արհեստանոցումն է պահակությունն անում, բոլոր այն ժամանակ, քանի դեռ կալանավորներն այնտեղ են գտնվում, արհեստանոցում պիտի մնա։

§ 141. Կալանավորների կողմից կարգը պահպանելու և աշխատանքին բարեխղճաբար վերաբերվելու, ինչպես և շինության մաքրության ու նրա մեջ գտնվող պետական գույքի ամբողջության վրա նա յե հսկում, նրանց փոխադրությունը թույլատրելով միայն աշխատանքների վարիչի կամ փոխանորդի կողմից ստորագրված թույլտվությամբ։

142. Արհեստանոցներում գտնվող կալանավորների հաշիվը նա յե պահում և հսկում է, որպեսզի կալանավորներն առանց պատշաճ թույլտվության ոչ մի տեղ չգնան ու առանց այն, կողմնակի մարդիկ արհեստանոցներ չմտնեն։

Այն կալանավայրերում, ուր այդ սահմանված է, նա արհեստանոցների դռները փակած է պահում, բանալիները շարունակ իր մոտ պահելով։

§ 143. Արհեստանոցի պահակ վերակացուն և կալանավորներին արհեստանոցներ աշխատանքի տանում ու կորպուս հետ բերում, ըստ որում կալանավորներին համարքով և ընդունում և հանձնում։

§ 144. Պետի, նրա փոխանորդի կամ հերթապահ ոստիկանի կողմից արհեստանոցն այցելելիս, աշխատողների թվի մասին նա յե զեկուցում։

§ 145. Նա հսկում է, վորպեսզի կալանավորներն աշխատանքից վերադառնալիս առանց հատուկ թույլտվության, վորևե իրեր, նյութեր և գործիքներ ներս չտանեն,

§ 146. Աշխատանքները վերջացնելուն պես նա արհեստանոցի շինությունը զննում է ու բոլոր հայտնաբերածի մասին զեկուցում է աշխատանքների ավագ վերակացուին։

ԽՈՀԱՆՈՑԻ ՅԵՎ ՀԱՑԱԳՈՐԾԱՐԱՆԻ ՊԱՇԱԿ ՎՈՐԱԿԱՑՈՒՈՒՆ
(§ § 147-152)

147. Խոհանոցի և հացագործարանի կահույքի և ինվենտարի ամբողջության համար, պահակ վերակացուն է պատասխանատու։

148. Նա, առանց պետի ոգնական-տնտեսության վարիչի թույլատվության, շինության մեջ վոչ միայն աշխատանքի հետ կապ չունեցող կալանավորներին չի թողնում, այլև կալանավայրի ծառայողներին։

140. Առանց պետի ոգնական՝ տնտեսության վարիչի թույլտվության, կահավորման վորևե առարկա ու պարենավորման մթերքներ ներս տանելը նա թույլ չի տալիս։

150. Շինությունների, ամանների և խոհանոցում ու հացագործարանում մաքրություն պահպանելու, ինչպես և կերակրի մաքուր ու բաժանմանը համապատասխանող պատրաստելու ու բաշխելու վրա նա յեհսկում։

151. Նա պարտավոր է կալանավորներին խոհանոց ու հացագործարան աշխատանքի տանել ու կորպուս հետ բերել, ըստ վորում նրանց համբարքով է ընդունում ու բաժանմունքի վերակացուին համբարքով հանձնում։

152. Աշխատանքը վերջացնելուն պես նա պարտավոր է շինությունը զննել ու հայտնաբերածի մասին զեկուցել տնտեսության ավագ վերակացուին կամ հերթապահ ոգնականին։

ՓՈԽԱԴՐՈՂ ՎԵՐԱԿԱՑՈՒՆԵՐԸ
(§ § 153-156)

153. Փոխադրող վերակացուները հերթապահ ոգնականի տրամադրության տակ են գտնվում։

154. Նրանք հերթապահ ոգնականի կարգադրությամբ կալանավորներին դուրս են տանում զրասեհյակ՝ նրանց զանազան թղթեր հայտնելու, հարցաքննությունների և այլի ինչպես և դատական հիմնարկներ, եռապներ (անցնող կալանավորների իջևան), հիվանդանոցներ ուղարկելու համար և այլն։

155. Առանց հերթի ստացումները նրանք են զննում և պարտավոր են նոր ընդունված կամ քաղաքից վերադարձած կալանավորներին ուղեկցել դեպի բաժանմունք, նախապես խուզարկելով նրանց։

156. Փոխադրող վերակացուները կալանավորներին բաժանմունքներից համբարքով պիտի ընդունեն և այնտեղ համբարքով հանձնեն։

ԿՈՐՊՈՒՍԻ ԴՈՒԱՆ ՊԱՇԱԿ ՎԵՐԱԿԱՑՈՒՆԵՐԸ
—157

157. Կորպուսի դրսի դուռն պահակ վերակացուն, յեթե այդ սահմանված է, պարտավոր է՝ ա) դուռը փակած պահել, իսկ նրա բանալին՝ իր հետ ունենալ. բ) առանց վերակացուի, պետի կամ նրա ոգնականի ուղեկցության և այս վերջիններին առանց ներկայացնելու պետի ոգնական—կորպուսի վարիչի, կամ վերջինի բացակայության դեպքում, պետի հերթապահ ոգնականի կողմից սահմանված թույլտվության, կալանավորներին կորպուսից դուրս չթողնել. գ) այն կալանավորներին, վորոնք կփորձեն առանց վերակացուի ուղեկցության անցնել՝ բռնել և կանչելով հերթապահին, հանձնել վերջինին. դ) կորպուսից դուրս թողած և այնտեղ վերադարձած կալանավորներին, ինչպես և նոր յեկողների հաշիվը պահել։

ԴՐՍԻ ՊԱՇԱԿԱՏԵՂԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ
(§ § 158-162)

158. Դրսի պահակատեղերում կանգնած վերակացուները պարտավոր են՝ կալանավորների փախուստի ու միմիանց միջև ու ոտարների հետ հարաբերությունների բոլոր փորձերը խափանել։

Կալանավորների կողմից պահակ վերակացուի որինական պահանջները չկատարելու դեպքում, վերջինը պետի ոգնական հերթապահին է կանչում։

159. Յերբ կալանավորները փախուստի փորձեր են անում և ուրիշ միջոցներով (նախազգուշացում, ոգնություն կանչել և

այլն) այդ փախուստի կանխելն անհնարին և լինում, վերակացուները պարտավոր են հրազեն գործածել. զենքը գործադրվում է նաև դրսի հարձակումներից պաշտպանվելու համար։

Ծանոթություն.—Հոգերուժական եքսպերտիզի ինստիտուտներում և անչափահաս իրավազանցների համար՝ աշխատանքի տներում զենքը կարող է գործադրվել միայն սույն հրահանգի § 20 «ա» կետով նախատեսված դեպքում։

160. Պահակ վերակացուին պահնորդական դիտանոցներ (караульная будка) մտնելը, ինչպես և վորևե կողմնակի զբաղմունքներով ու զբույցներով պարապելն արգելվում է։

161. Պահակ վերակացուին արգելվում է իր վրա վերցնել աշխատանքի մեջ գտնված այն կալանավորների պահնորդության հսկողությունը, վորոնք իր պահակատեղին մոտիկ են գտնվում։

162. Փախուստ հայտնաբերելու դեպքում պահակ վերակացուն փախչողին հետապնդելու համար իր պահակատեղը վոչ մի դեպքում չթողնելով, այդ մասին խմաց է տալիս հերթապահին։

ԴԱՐՊԱՍԻ ՄՈՏԻ ՎԵՐԿԱՑՈՒՆԵՐԸ

(§ § 163—172)

§ 163. Դարպասի մոտի վերակացուի պաշտոնում նրանցից ամենաճարպիկները, վստահելիներն ու ամենա ավելի սրամիտներն են նշանակվում։

164. Հերթապահության ժամանակ դռնապանն առանց բացակայելու իր պահակատեղում պիտի գտնվի. դարպասը շարունակ կողպած ու բալանիներն իր մոտ պահի։ Դարպասի բանալիներն ուրիշ տեղ դնելը կամ կողպեքի մեջ թողնելն արգելվում է։

§ 165. Դարբասի մոտի վերակացուն առանց հերթապահի թույլատվության միայն այն անձանց և ներս թողնում և կալանավայրից դուրս թողնում, վորոնք որենքով կամ հատուկ թույլատվությամբ կալանավայրն այցելելու իրավուք ունին, ինչպես և կալանավայրի այն ծառայողներին, վորոնց նա անձամբ ճանաչում է յեվ նրանց, վորոնք անցնելու իրավունք ունեն։

§ 166. Նախ քան կալանավայր մտնել ցանկացողներն ներս թողնելը, դարպասի մոտի վերակացուն պարտավոր է դարպասի մեջ յեղած փոքրիկ լուսամուտից նրանց զննել ու համոզվել, թե այդ մարդիք մուտքի իրավունք ունին արդյոք, կալանավորներից վորյեվե մեկին դուրս թողնելիս, դռնապանը նույնպես պարտավոր է համոզվել, թե նա դուրս գնալու համար իրավունք ունի արդյոք։

§ 167. Նախ քան դարպասը բաց անելը, վերակացուն պիտի համոզվի, վոր դարպասի մոտ կալանավորներից վոչ վոք չկա և վոր դռնակի բանալը վտանգավոր չի։

§ 168. Կասկած առաջ բերող բոլոր դեպքերում, դարպասի մոտի վերակացուն հերթապահ ոգնականին և կանչում։

§ 169 Դարպասի մոտի վերակացուն բոլոր ներս ընդունվող ու դուրս գնացող սայլերի, ինչպեսյեվ ներս տարվող ու դուրս բերվող առարկաների և իրերի համար պարտավոր է հերթապահ ոգնականի ստորագրությամբ ու կնիքով սահմանված թույլատվություն պահանջել. միաժամանակ նա պիտի մանրամասնորեն ստուգի թե իրերը կամ առարկաները համապատասխանում են արդյոք նրան, ինչ վոր թույլատվության մեջ և ցույց տված։ Կասկած առաջացնող դեպքում նա պարտավոր է կանչել հերթապահ ոգնականին ու զեկուցել նրան։

§ 170. Դարպասի մոտի վերակացուն պարտավոր է դուրս գնացող ու ներս յեկող կալանավորների հաշիվը պահել, նշանակելով, թե վորքան և յեկել, կամ եսապի հետ դուրս գնացել, աշխատանքի գնացել կամ վերադարձել, դատական հիմնարկներ ուղարկվել յեվ այլն, վորպիսի նշանակումները նա դարպասի մոտ այս նպատակով յեղած հատուկ տախտակի վրա յե անում։

§ 171. Կալանավորներին դարպասից դուրս տանելիս, դարպասի մոտի վերակացուն պարտավոր է ուղեկցող պահակից հերթապահ ոգնականի ստորագրությամբ ու կնիքով սահմանված թույլտվություն պահանջել։

§ 172. Տեղեկանքների համար յեկող այցելուներին դարպասի մոտի վերակացուն միայն հերթապահ ոգնականի թույլտվությամբ և գրասենյակ թողնում։

ՄԻՅՈՒՍ ՎԵՐԱԿԱՑՈՈՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

(§ § 173—177)

§ 173. Տեսակցության ժամանակ պահակատեղում կանգնելիս, վերակացուները հսկում են, վոր կալանավորներն ու նրանց տեսության յեկողները կալանավայրում տեսակցության համար սահմանված կանոնները խստիվ պահպանեն։

§ 174. Ստացումները զննելիս, վերակացուները պարտավոր

ՀԵՍ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ-Արմ ԵՍՍՀ
Կ. Մարքսի անվան
<< Ազգային գրադարան
NL0213269

են ստացող մթերքները մանրաղնին նայել և այն ցուցակնե-
րով ստուգել, վորոնք այցելուների կողմից են դրված։

§ 175. Կալանավորների զբոսանքի վրա հսկելու համար նշա-
նակված վերակացուները մշակված ցուցակի համաձայն են նը-
բանց զբոսանքի հանում, ըստ վորում նրանց համբարքով են
ընդունում և հանձնում։

§ 176. Կալանավորների զբոսանքի ժամանակ վերակացու-
ները պիտի հսկեն, վորպեսզի կալանավորները սահմանված կար-
գով զբոսնեն, կամերներում գտնվող կալանավորների հետ չխոսեն,
նրանց հետ վոչ մի հարաբերության մեջ չմտնեն և զբոսանքից
վերադառնալիս կամերները վոչ մի արգելված առարկաներ չտա-
նեն։

§ 177. Դպրոցի, թատրոնի, դասախոսությունների, բաղա-
նիքի և այլն վերակացուներն իրենց ծառայության մեջ կալա-
նավայրի պետի հատուկ ցուցմունքներով են ղեկավարվում։

ՀՍԽՀ Ներքգործժողկոմ՝ ԴՈՒՐԳԱՐՅԱՆ

Կալանավայրերի բաժնի պետ՝ ԴԱՎԹՅԱՆ

37.112

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР